**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

---

ք. Երևան 26.02.2021թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
## ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
## թիվ ՍՑ-LO-2021/27

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Մանանկ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-7/53» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ուսադիրների, գլխարկների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԳՀԱՊՁԲ-20-7/53-2»:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1191-2021 գրությամբ «Մանանկ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

## 1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 27.01.2021թ.-ի թիվ ՊՆ//315-2021 գրության հիման վրա, 01.02.2021թ.-ին «Մանանկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.02.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 01.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/27 համարի ծածկագիրը:

10.02.2021թ.-ին և 26.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.02.2021թ.-ին:

## 2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 27.01.2021թ.-ի թիվ ՊՆ//315-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել հետևյալը.

*«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և ստորև ներկայացված կազմակերպությունների միջև կնքված գնման պայմանագրերի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանությունը նախարարությունը 2021թ. հունվարի 21-ին միակողմանի լուծել է՝*

*1. «Մասիսի Գարուն ԿՖ» ՍՊԸ-ի հետ 12.06.2020թ. կնքված N ԳՀԾՁԲ-20-7/16-1 ծածկագրով պայմանագիրը,*

*2. «Մասիսի Գարուն ԿՖ» ՍՊԸ-ի հետ 23.10.2019թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/1-3 ծածկագրով պայմանագիրը և կից 09.04.2020թ. կնքված N1 Համաձայնագիրը,*

*3. «Մանակ» ՍՊԸ-ի հետ 15.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/53-2 ծածկագրով պայմանագրը և կից 30.11.2020թ. կնքված N1 փոփոխությունը,*

*4. «Վանգակ» ՍՊԸ-ի հետ 15.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/53-5 ծածկագրով պայմանագրը:*

*Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 25.01.2021թ. հրապարակվել է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում:»:*

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացրել են «Մանանկ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը 11.02.2021թ.-ի թիվ ՊՆ/ՊՆ/02/631-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ուսումնասիրելով «Մանանկ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/27 ընթացակարգի հիմքերի վերաբերյալ վերոնշյալ մասնակցի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.*

*Մասնակիցը 30.11.2020թ. ստորագրել է ԳՀԱՊՁԲ-20-7/53-2 պայմանագրին կից թիվ 1 համաձայնագիրը, որով ստանձնել է պարտավորություններ մինչև 15.12.2020թ մատակարարել ապրանքներ: Հարկ է նկատել, որ համաձայնագրի կնքման պահին արդեն իսկ առկա էր կորոնավիրուսային համավարակը և ՀՀ-ում հայտարարված էր կարանտին, իսկ պատերազմն արդեն ավարտվել էր: Այսինքն՝ մասնակիցը համաձայնագրի ստորագրման պահին արդեն իսկ տեղյակ լինելով առկա խոչընդոտների մասին, ստորագրել է նշված համաձայնագիրը և ստանձնել պարտավորություններ մինչև 15.12.2020թ մատակարարել ապրանքներ, որոնք չի մատակարարել:*

*Այս կապակցությամբ գտնում եմ, որ մասնակցի դիրքորոշմամբ ներկայացված հիմքերը էական ազդեցություն չեն ունեցել մասնակցի կողմից համաձայնագրով և պայմանագրով նախատեսված մատակարարումները չիրականացնելու վրա և այն ընդամենը փորձ է ստանձնած պարտավորությունները չկատարելը արդարացնելու ուղղությամբ:*

*Հայտնում եմ նաև, որ ստանձնած պարտավորությունների նկատմամբ նմանօրինակ վերաբերմունքը խիստ բացասական հետևանքներ է ունեցել և ունենալու ՀՀ ՊՆ ապահովման գործընթացի վրա:»:*

**3. <u>«Մանանկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 02.02.2021թ.-ի գրությամբ դիմել է «Մանանկ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1191-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Մասնակիցը 09.02.2021թ.-ին ներկայացրած թիվ Պ-007 գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

*«Ուսումնասիրելով թիվ ՍՑ-ԼՕ-2021/27 ընթացակարգի նախաձեռնման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը, գտնում ենք, որ նախաձեռնումը հիմնազուրկ է, իսկ նախաձեռնված ընթացակարգը՝ ենթակա մերժման հետևյալ պատճառներով՝*

*1.ՀՀ Պաշտպանության Նախարարության և <<Մանանկ>> ՍՊԸ-ի միջև 15.09.2020թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-20-7/53-2 պայմանագրով և հիշյալ պայմանագրի 30.11.2020թ. N1 փոփոխությամբ <<Մանանկ>>ՍՊԸ-ն պարտավորվել է առավելագույնը մինչև 15.12.2020թ. արտադրելու և գնման ժամանակացույցի համաձայն ՀՀ ՊՆ-ին մատակարարելու 1515 հատ գլխարկներ և 168 հատ բաճկոններ (Բաճկոն ՝ գարնանային-աշնանային կիսաբրդյա սև գույնի):*

*Քանի որ սահմանված ժամկետում հիշյալ 168 հատ բաճկոնները չեն մատակարարվել 21.01.2021թ. ՊՆ ՆՏԱԴ-ը միակողմանի մասնակի լուծել է վերոնշյալ պայմանագիրը (Փոփոխությունը): Հիշյալ 168 հատ բաճկոնները չեն արտադրվել ու մատակարարվել հետևյալ պատճառներով՝*

*Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը 2020թ. մարտ ամսին հայտարարել է կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված համաճարակ: Դրա հետ կապված ՀՀ Կառավարության 16.03.2020թ. <<Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին>> թիվ 298-Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում 2020թ. մարտի 16-ից մինչև սեպտեմբերի 11-ը հայտարարվել է արտակարգ դրություն, իսկ ՀՀ Կառավարության 11.09.2020թ. N 1514-Ն որոշմամբ 2020թ. սեպտեմբերի 11-ից մինչև 2021 թ. հունվարի 11-ը ՀՀ-ում սահմանվել է կարանտին:*

*2020թ. մարտ ամսից մինչև օրս <<Մանանկ>> ՍՊԸ –ն Կառավարության հիշյալ որոշումների հիման վրա աշխատել է տևական ընդհատումներով, բազմաթիվ աշխատողներ վարակվել են կորոնավիրուսով, որի պատճառով ՍՊԸ-ն այդ ամբողջ ընթացքում գործել է 20-25% հզորությամբ: Եղել են դեպքեր, որ որևէ արտադրամասի 1 աշխատողի վարակման պատճառով չի աշխատել ամբողջ արտադրամաս, քանի որ որպես կոնտակտավորներ արտադրամասի բոլոր աշխատողները ինքնամեկուսացվել են: Իսկ ձևարանի աշխատողների ինքնամեկուսացման պատճառով տևական ժամանակով պարալիզացվել է ողջ ֆաբրիկայի գործունեությունը:*

*Կորոնավիրուսի համաճարակը խիստ բացասաբար է անդրադարձել նաև հումքի, օժանդակ նյութերի և աքսեսուարների ներկրման վրա, որոնք մեր կողմից գնվում և ներկրվում են առավելապես արտասահմանից (Ռուսաստան Բելոռուս, Թուրքիա և այլն:) Համավարակի պատճառով ամիսներ շարունակ այդ երկրների հետ փակ են եղել օդային և ցամաքային հաղորդակցությունները:*

*Բացի նշված պայմանագիրը, <<Մանանկ>> ՍՊԸ-ն կնքված այլ պայմանագրեր ունի նաև այլ գերատեսչությունների հետ: Վերը հիշատակված ֆորս-մաժորային պայմանների պատճառով այդ պայմանագրերի լրիվ կամ մասնակի կատարումը ևս խոչնդոտել է վիճահարույց պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարմանը:*

*Այդ դժվարություններին ավելացել է նաև 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմը ՀՀ-ի և ԱՀ-ի նկատմամբ:Սեպտեմբերի 27-ից մինչև պատերազմի ավարտը՝ նոյեմբերի 9-ը <<Մանանկ>> ՍՊԸ-ն կասեցրել է բոլոր պայմանագրային պարտավորությունները, այդ ընթացքում միմիայն զբաղվելով հայկական բանակի համար համազգեստի, վրանների, քնապարկերի արտադրությամբ ու առաջնագիծ մատակարարմամբ, որի պատճառով խախտվել են ոչ միայն սույն, այլև այլ գերատեսչությունների հետ կնքված տասնյակ այլ պայմանագրերով նախատեսված մատակարարումների ժամկետները:*

*2. ՀՀ <<Գնումների մասին>> Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետի համաձայն ..... մասնակիցն ընդգրկվում է Գնումների գործընթացի մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:*

*ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի համաձայն՝ <<պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցվում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները >>:*

*Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն <<Ձեռնարկատիրական գործունեություն իրականացրելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն տվյալ պայմաններում արտակարգ և անկանխատեսելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով>>:*

*N ԳՀԱՊՁԲ-20-7/53-2 պայմանագրի 7-րդ կետով սահմանված է՝ <<Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել.....>>:*

*3. Ֆորս-մաժորային իրադրության պատճառով է միայն 2020թ. դեկտեմբեր ամսվա սկզբներին Հայաստան հասել N ԳՀԱՊՁԲ-20-7/53-2 պայմանագրի նախատեսված 168 հատ բաճկոնների արտադրման համար անհրաժեշտ և ամիսներ առաջ պատվիրված գործվածքեղենը և կարի համար նախատեսված աքսեսուարները: Քանի որ բաճկոնների մատակարարման վերջնաժամկետը մոտենում էր ավարտին, 18.12.2020թ. N Մ-005 գրությամբ ՊՆ ՆՏԱԴ-ի ղեկավարին գրավոր ներկայացվել է ստեղծված Ֆորս-մաժորային իրադրությունը, հայտնվել է, որ անհրաժեշտ գործվածքները և աքսեսուարները արդեն ստացվել է և խնդրվել է 168 հատ բաճկոնների արտադրությունը ու մատակարարումը փոխանցել հաջորդ տարվան, որի համար պատրաստակամ ենք ներկայացնելու համապատասխան բանկային երաշխիքներ, կամ երկկողմանի լուծելու պայմանագրի՝ 168 հատ բաճկոնների վերաբերյալ մասը: Մինչև 22.01.2021թ. սույն գրությանը որևէ պատասխան չի տրվել, մեզ պահելով անորոշության մեջ: Միայն 22.01.2021թ. ՊՆ ՆՏԱԴ-ից ստացել ենք ծանուցում 168 հատ բաճկոնների մասով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին: Տարօրինակ է, որ մեր հիշյալ գրությունից 35 օր հետո է լուծվել պայմանագիրը, այն դեպքում, երբ մենք խնդրել էինք բաճկոնների արտադրությունը փոխանցել հաջորդ տարվան: Եթե փոխանցումը կատարվեր, ապա առավելագույնը 15*

*օրում կհասցնեինք արտադրելու և մատակարարելու 168 հատ բաճկոնները:: Այս հանգամանքը փաստում է այն մասին, որ ՊՆ ՆՏԱԴ-ին առանձնապես չի հետաքրքրել հիշյալ բաճկոնները:*

*Կից ուղարկվում է գործվածքի և աքսեսուարների ներկրման վերաբերյալ հաշիվ-ապրանքագրերի պատճենները << 11 >> թերթից և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ի ղեկավարին ուղարկված գրության պատճենը << 1 >> թերթից:»:*

Վերոգրյալի հիման վրա և հաշվի առնելով «Մանանկ» ՍՊԸ-ի գործողություններում մեղքի բացակայությունը՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Մանանկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

Մասնակիցը, ի լրումն վերոհիշյալ գրության, 15.02.2021թ.-ին թիվ Մ-015 գրությամբ հայտնել է հետևյալը.

*«Ի լրումն ՍՅ-ԼՕ-2021/27 ընթացակարգով մեր 09.02.2021թ. դիրքորոշմանը, մանրամասնում ենք, թէ կոնկրետ ինչումն է դրսևորվել ֆորս-մաժորային իրավիճակի ազդեցությունը N <<*

*ԳՀԱՊՁԲ-20-7/53-2>> պայմանգրով նախատեսված 168 հատ բաճկոնների ժամանակին չմատակարարման վրա:*

*- հիշյալ ծածկագրով մրցույթին <<Մանանկ>> ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել 14.08.2020թ: Հայտերի բացումը տեղի է ունեցել 18.08.2020թ: 31.08.2020թ. ՊՆ-ի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու մասին որոշումը, իսկ 15.09.2020թ. կնքվել է պայմանագիրը:*

*Մրցույթի մասնակցության հայտ <<Մանանկ>> ՍՊԸ-ն ներկայացրել է նկատի ունենալով նաև, որ ՀՀ-ում արտակարգ դրության ավարտից՝ սեպտեմբերի 11-ից հետո արտասահմանի հետ բացվելու են ավտոճանապարհային և օդային հաղորդակցությունները, ուստի ի վիճակի կլինեինք ներկրելու բաճկոնի կարման համար անհրաժեշտ գործվածքները և աքսեսուարները: Սակայն արտակարգ դրության ավարտի հենց նույն օրը՝ սեպտեմբերի 11-ին, ՀՀ Կառավարության հիշատակված որոշման հիման վրա ՀՀ-ում սահմանվել է կարանտին և ըստ էության փակ է մնացել ցամաքային և օդային բոլոր հաղորդակցությունները: Բացի այդ, այդ օրերին Վրաստանում ևս լայն թափով սկսեց տարածվել կորոնավիրուսը, ուստի Վրաստանը փակել էր ՀՀ-ի հետ բոլոր ցամաքային հաղորդակցությունները:*

*- Տվյալ իրադրությունում ելքը միայն Թուրքիայի հետ կապն էր, որտեղից ավտոմեքենաներ մուտք էին գործում Հայաստան: <<SKYPE>> համակարգով կապնվելով Թուրքիայի մեր մատակարար կազմակերպությունների հետ, սեպտեմբերի 18-20 պատվիրել ենք անհրաժեշտ բոլոր գործվածքները և աքսեսուարները, սակայն սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմի պատճառով մինչև նոյեմբեր ամսվա վերջը կասեցվել էին ՀՀ-ի և Թուրքիայի միջև բոլոր տեսակի շփումները, այդ թվում նաև բեռնափոխադրումները, որի պատճառով է միայն պատվիրված գործվածքեղենը և աքսեսուարները ՀՀ հասել 2020թ. դեկտեմբեր ամսվա սկզբներին:*

*- Ինչպես հայտնել ենք նախորդ դիրքորոշման մեջ, պայմանագրի ժամանակացույցի ընթացքում <<Մանանկ>> ՍՊԸ-ի մի քանի աշխատակիցներ վարակվել են կորոնավիրուսով, որը նույնպես ազդել է Ընկերության բնականոն գործունեության վրա:*

*Կից ուղարկվում է Ընկերության աշխատակիցներ Արթուր Գեղամյանի, Դոնարա Մարտիրոսյանի, Գայանե Կարապետյանի՝ կորոնավիրուսով վարակված լինելու վերաբերյալ բժշկական տեղեկանքների պատճեները: Եղել նաև դեպքեր, որ վարակված աշխատակիցները բուժումը ստացել են տնային պայմաններում ինքնամեկուսացվելով և չեն դիմել բուժհաստատություններ:»:*

**4. <u>ՍՑ-LO-2021/27 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 15.09.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/53-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Մասնակիցը 4-րդ եռամսյակում (բայց ոչ ուշ 30.11.2020թ.-ը) բացի այլ ապրանքներից, պետք է մատակարարի 168 հատ Բաճկոնակներ /բաճկոներ /Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա սև գույնի// ապրանքատեսակները:

iii. ՀՀ պաշտպանության նախարարության և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 30.11.2020թ.-ին կնքվել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/53-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 փոփոխությունը (այսուհետ նաև՝ Փոփոխություն):

iv. Փոփոխության 1.1 կետի համաձայն՝ կողմերը որոշել են Պայմանագրի թիվ 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ պայմանագրի կատարման ժամկետն երկարացվել է մինչև 15.12.2020թ.-ը:

v. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 22.01.2021թ.-ի թիվ ՆՏԱ/187 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 15.09.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/53-2» գնման պայմանագրի և այդ պայմանագրին կից 30.11.2020թ.-ին կնքված Փոփոխության համաձայն՝ Մասնակիցը 2020թ.-ի 4-րդ եռամսյակում մինչև դեկտեմբերի 15-ը պետք է մատակարարեր 168 հատ Բաճկոնակներ /բաճկոներ /Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա սև գույնի// ապրանքատեսակ, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ.-ի հունվարի 22-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/53-2» գնման պայմանագիրը (խախտվել է մատակարարման ժամկետները):

**5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1191-2021 գրությամբ «Մանանկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի, պայմանագրով սահմանված ժամկետից:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա»

ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձն ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ*

*«Լանդրաս» ՓԲԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Պայմանագրի 7-րդ գլխով սահմանվել է, որ Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 15.09.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/53-2» ծածկագրով

պետական գնման պայմանագրի հավելված 1-ով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ Մասնակիցը 4-րդ եռամսյակում (բայց ոչ ուշ 30.11.2020թ.-ը) բացի այլ ապրանքներից, պետք է մատակարարի 168 հատ Բաճկոնակներ /բաճկոներ /Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա սև գույնի// ապրանքատեսակները:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 30.11.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/53-2» ծածկագրով պետական գնման պայմանագրի թիվ 1 Փոփոխության 1.1 կետի համաձայն՝ կողմերը որոշել են Պայմանագրի թիվ 1 հավելվածով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում կատարել փոփոխություն՝ պայմանագրի կատարման ժամկետն երկարացվել է մինչև 15.12.2020թ.-ը:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին 22.01.2021թ.-ի թիվ ՆՏԱ/187 ծանուցման համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Մանանկ» ՍՊԸ-ի միջև 15.09.2020թ.-ին կնքված թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/53-2» գնման պայմանագրի և այդ պայմանագրին կից 30.11.2020թ.-ին կնքված Փոփոխության հիման վրա Մասնակիցը 2020թ.-ի 4-րդ եռամսյակում մինչև դեկտեմբերի 15-ը պետք է մատակարարեր 168 հատ Բաճկոնակներ /բաճկոներ /Բաճկոն՝ գարնանային-աշնանային, կիսաբրդյա սև գույնի// ապրանքատեսակ, որը չի մատակարարել:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2021թ.-ի հունվարի 22-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է թիվ «ԳՀԱՊՁԲ-20-7/53-2» գնման պայմանագիրը (խախտվել է մատակարարման ժամկետները):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հանգամանքը պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է՝ հիմք ընդունելով այն, որ Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի ձեռնարկած գործողությունների արդյունքում առկա է Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման և

Հայաստանի Հանրապետության տարածք ներխուժելու անմիջական վտանգ, ինչը սպառնում է Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը, անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և դրանով պայմանավորված՝ քաղաքացիների ու բնակչության կյանքին ու անվտանգությանը, և այդ հանգամանքների վերացումն անհնարին է առանց արտակարգ միջոցներ ձեռնարկելու, ինչպես նաև ելնելով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և տնտեսության զորահավաքային ծավալման համար առավելագույն բարենպաստ պայմանների ստեղծմամբ Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման անմիջական վտանգը կանխելու, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց բնականոն գործունեությունն ու մարդկանց կյանքի և անվտանգության պաշտպանությունը ռազմական դրության պայմաններում ապահովելու նպատակից՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.09.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումը:

Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.09.2020թ.-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշումը, փաստում է, որ այն օբյեկտիվորեն կարող էր ազդել Ընկերության ստանձնած պարտավորությունների կատարման վրա, քանի որ Պայմանագիրը կնքվել է մինչև Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելը, որպիսի պայմաններում անհաղթահարելի ուժի ազդեցության հիմքով Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ չկատարելու համար Մասնակիցը կարող է ազատվել պատասխանատվությունից, քանի որ, ինչպես վերը նշվեց, **անհաղթահարելի ուժի ազդեցությունը պետք է ծագի պայմանագիրը կնքելուց հետո**, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Բողոքներ քննող անձը, վերոնշյալները քննարկելով նաև «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքի համատեքստում, հարկ է համարում փաստել, որ ռազմական դրությունը բացառապես Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարվելու դեպքում իրականացվող ժամանակավոր միջոցառում է, որն իրենից ներկայացնում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների գործունեության հատուկ իրավական ռեժիմ և թույլատրում է իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց իրավունքների և

ազատությունների որոշակի սահմանափակումների և նրանց նկատմամբ լրացուցիչ պարտավորությունների սահմանում (հոդված 1): Ռազմական դրություն հայտարարելու նպատակն է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և տնտեսության զորահավաքային ծավալման համար առավելագույն բարենպաստ պայմանների ստեղծմամբ դիմակայել Հայաստանի Հանրապետության վրա զինված հարձակմանը կամ կանխել դրա անմիջական վտանգը, ինչպես նաև ապահովել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեությունն ու մարդկանց կյանքի և անվտանգության պաշտպանությունը ռազմական դրության պայմաններում (հոդված 3):

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Մանանկ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունների չկատարման հանգամանքը ելել է օբյեկտիվ հիմքերից՝ պայմանավորված Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու հանգամանքով, որի արդյունքում առաջացած պատճառներն անհնարին են դարձրել Մասնակցի կողմից Պայմանագրով ստանձնած պարտա-վորությունների պատշաճ կատարումը՝ վերջինիս կամքից անկախ հանգամանքներով:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

## Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1191-2021 գրությամբ «Մանանկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/27 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ**
**ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**